ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՎԱՐՍԵՐ ՍԱՄՎԵԼԻ

ԻՍՐԱՅԵԼԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿՐՈՆԱԿԱՆ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

ՍԵՂՄԱԳԻՐ

ԺԲ.00.01. (Պետության և իրավունքի տեսություն և պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ատենախոսության

ԵՐԵՎԱՆ-2018

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ВАРСЕР САМВЕЛОВНА КАРАПЕТЯН

РЕЛИГИОЗНЫЕ И КОНСТИТУЦИОННЫЕ ОСНОВЫ ПРАВОВОЙ СИСТЕМЫ ИЗРАИЛЯ

АВТОРЕФЕРАТ

Диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности: 12.00.01 - «Теория и история государства и права, история государственных и правовых учений»

ЕРЕВАН - 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ա. Գ. Վաղարշյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Վ. Վ. Ստեփանյան**
իրավաբանական գիտությունների թեկնածու **Վ. Վ. Գևորգյան**

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտ**

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018 թ. փետրվարի 23-ին, ժամը 14^{30}-ին Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, Երևան, Ալեք Մանուկյան 1)։

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում։

Սեղմագիրն առաքվել է 2018 թ. հունվարի 22-ին։

Մասնագիտական խորհրդի գիտ. քարտուղար,
իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ **Ա. Ա. Մանասյան**

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юридических наук, профессор **А.Г. Вагаршян**

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **В. В. Степанян**
кандидат юридических наук **В.В. Геворкян**

Ведущая организация: **Институт философии, социологии и права НАН РА**

Защита диссертации состоится 23-го февраля 2018г. в 14^{30} часов на заседании специализированного совета 001 по юриспруденции ВАК РА при Ереванском государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Ереванского государственного университета.

Автореферат разослан 22 января 2018г.

Ученый секретарь специализированного совета,
кандидат юридических наук, доцент **А. А. Манасян**

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Իսրայելի իրավական համակարգը խառն իրավական համակարգ է, որում զուգակցվում են ընդհանուր և մայրցամաքային, աշխարհիկ և կրոնական իրավունքի տարրերը: Իրավական համակարգի բնույթն, ի թիվս այլնի, պայմանավորված է Իսրայելի պետության զարգացման պատմական ընթացքով, ինչպես նաև պետության և իրավունքի կազմավորման և կայացման գործում հրեական կրոնի՝ հուդայականության ունեցած ազդեցությամբ: Այսպես՝ պետության կազմավորման սկզբնական շրջանում այն մեծապես կրում էր անգլիական ընդհանուր իրավունքի ազդեցությունը, որի հիմքերը դրվել էին Պաղեստինի նկատմամբ բրիտանական մանդատի տարիներին (1917-1948 թթ.): Հետագայում այն աստիճանաբար իր տեղը զիջեց մայրցամաքային իրավունքին՝ իրավունքի առանձին ճյուղերում կատարված կոդիֆիկացիայի արդյունքում: Դեռևս Օսմանյան կայսրության տիրապետության ժամանակաշրջանում (1517-1917 թթ.) գործող միլեթական համակարգը, որ ճանաչում էր առանձին կրոնական համայնքների ինքնավարությունը, անձի անձնական կարգավիճակի հարցերում կրոնական իրավունքի և դատարանների բացառիկ իրավասության ճանաչման հիմքը հանդիսացավ: Բացի այդ, հուդայականությունը, մեծ ազդեցություն ունենալով հրեական պետության կազմավորման գործում, մեծապես պայմանավորեց նաև Իսրայելի իրավական համակարգի զարգացման ուղին, բնույթն ու բովանդակությունը: Ավելին՝ կրոնականությունն այսօր էլ ընկած է պետության իրավական քաղաքականության, ինչպես նաև սոցիալ-քաղաքական կյանքի ցանկացած այլ ոլորտի վերաբերյալ քննարկումների հիմքում՝ ուրվագծելով դրանց փոփոխման ու զարգացման միտումներն ու հեռանկարները:

Այս և մի շարք այլ հանգամանքներով պայմանավորված՝ Իսրայելի իրավական համակարգը մեծ հետաքրքրություն է ներկայացնում համեմատական իրավագիտության դիրքերից և լայնորեն ուսումնասիրվում արտասահմանյան մասնագիտական գրականության մեջ:

Իսրայելական փորձի ուսումնասիրությունը կարող է անփոխարինելի լինել պետության և կրոնի տարանջատման, կրոնականության օրենսդրական ամրագրման, պետության կրոնական և ժողովրդավարական բնութագրերի հարաբերակցության և համատեղելիության, անձի էթնիկ-կրոնական ինքնության և դրանով պայմանավորված՝ քաղաքացիության ձեռքբերման հարցում պետական քաղաքականության, սահմանադրական

վերահսկողության, մարդու իրավունքների դատական ճանաչման, դրանց օրենսդրական ամրագրման և սահմանափակման, կրոնական ազատության, այդ թվում՝ կրոնից ազատության ապահովման, կրոնական ինստիտուտների գործունեությանը պետական ներգրավվածության և օժանդակության, անձնական կարգավիճակի հարցերում կրոնական իրավունքի գործողության առանձնահատկությունների և մի շարք այլ հարցերի պարզաբանման առումով: Բացի այդ՝ Իսրայելի իրավական համակարգի ուսումնասիրությունը կարող է օգտակար լինել Իսրայելի պետության կողմից վարվող ներքին և արտաքին քաղաքականության, տարածաշրջանային և գլոբալ-քաղաքական զարգացումների ամբողջական ընկալման տեսանկյունից:

Հայաստանի Հանրապետությունում Իսրայելի իրավական համակարգն ընդհանրապես ուսումնասիրված չէ: Վերը նշվածից բացի՝ մեզանում սույն հարցի ուսումնասիրությունը կարևորվում է նաև այնպիսի հանգամանքներով, ինչպիսիք են Իսրայելում ճանաչված հայկական կրոնական համայնքների առկայությունը, Երուսաղեմ քաղաքի տարածքում գտնվող սրբավայրերի, մասնավորապես՝ Սուրբ Հարության տաճարի նկատմամբ Հայ առաքելական եկեղեցու ունեցած իրավազորությունը, Երուսաղեմի հին քաղաքում առանձնացված հայկական թաղամասի առկայությունը: Բացի այդ՝ հրեա և հայ ժողովուրդների պատմական անցյալում առկա ընդհանրությունները, ինչպիսիք են՝ պետականության երկարատև բացակայությունը, ապա՝ անկախության վերականգնումը, ցեղասպանությունը, աշխարհասփյուռ վիճակը, Սփյուռք-ազգային պետություն կապերը, ազգային պետությանն Սփյուռքում բնակվողների վերինտեգրումը և դրանով պայմանավորված՝ քաղաքացիության շնորհման ոլորտում պետության որդեգրած քաղաքականությունն այս հարցի ուսումնասիրության արդիականության մեկ այլ ապացույց է:

Մեր տարածաշրջանում նկատվում է Իսրայելի պետության ազդեցության ուժեղացումը, հատկապես՝ Ադրբեջանական Հանրապետության հետ Իսրայելի պետության կապերի սերտացման առումով, ինչը ևս հետազոտության արդիականության հիմքերից մեկն է:

Սույն ատենախոսության շրջանակներում անձի անձնական կարգավիճակի, սրբավայրերում կրոնական վարքագծի կարգավորման հարցերում Իսրայելի պետության քաղաքականության, Երուսաղեմի կարգավիճակի վերաբերյալ կատարված վերլուծություններն ու եզրահանգումները հնարավորություն կտան, ի թիվս այլնի, պարզելու նաև հայկական համայնքների ու

ինստիտուտներին առնչվող հարցերը՝ առանց այդ հարցերին, որպես այդպիսին, առանձին անդրադառնալու: Բացի այդ՝ Իսրայելի պետություն հրեաների վերադարձի, վերջիններիս վերադարձի ուժով քաղաքացիության շնորհման, ինչպես նաև Սփյուռքների հետ Իսրայելի պետության քաղաքականության ուսումնասիրությունը կարող է հետաքրքրություն ներկայացնել համապատասխան ոլորտում օրենսդրական լուծումների ու կարգավորումների փոխառման ու ներդրման տեսանկյունից: Միաժամանակ, Իսրայելը՝ որպես հրեական պետություն պահելու հրամայականը, դրանով պայմանավորված՝ պետության ներքին և արտաքին մարտահրավերները կօգնեն առավել ճիշտ և ամբողջական գնահատելու Իսրայելի պետության արտաքին քաղաքականությունը, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցի հետ կապված:

Վերը նշված հանգամանքների ամբողջությունն էլ պայմանավորում է թեմայի արդիականությունը:

Թեմայի գիտական հետազոտման աստիճանը: Իսրայելի իրավական համակարգին, դրա առանձին ինստիտուտներին և հարցերին արտերկրի, այդ թվում՝ Իսրայելի գիտնականներից անդրադարձել են Ա. Բարաքը, Ս. Նավոտը, Դ. Կրեցմերը, Վ. Պ. Վորոբյովը, Ա. Շապիրան, Մ. Էդելմանը, Կ. Դեուիթ-Արարը, Ա. Ռուբինշտայնը, Մ. Ն. Մարչենկոն, Հ. Է. Բեյքերը, Ի. Էնգլարդը, Մ. Էլոնը, Դ. Շարֆմանը, Ի. Զոնտիկովը, Ի. Ա. Չայկոն, Ա. Էպշտեյնը, Ի. Մ. Էդրին, Ռ. Հըրշլը, Ջ. Ջակոբսոնը, Ի. Շաչարը, Մ. Ա. Սապրանովան, Ա. Դ. Զվյագելսկայան: Հայաստանի Հանրապետությունում Իսրայելի իրավական համակարգն ուսումնասիրված չէ, և սույն ատենախոսությունն առաջինն է այս թեմայով:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտն Իսրայելի իրավական համակարգն է՝ պետության և կրոնի փոխհարաբերության և փոխազդեցության համատեքստում: Հետազոտության առարկան են՝ կրոնի հետ փոխհարաբերությունների ձևավորումը և հաստատումը, Իսրայելի պետության հիմնադրումը՝ որպես հրեական և ժողովրդավարական պետություն, Իսրայելի հրեական և ժողովրդավարական բնութագրերի հարաբերակցությունը, Իսրայելի պետության սահմանադրական զարգացումները, դրանց համատեքստում հիմնական օրենքների կարգավիճակի փոփոխությունը և մարդու իրավունքների իրավական կարգավորումը, Իսրայելում պետության և կրոնի տարանջատման հարցը՝ կրոնական ազատության ապահովման տեսանկյունից, կրոնական ինստիտուտների

գործունեությանը պետական ներգրավվածությունը, կրոնական ստատուս-քվոյի և ընդհանուր առմամբ պետության բնույթի փոփոխման ու զարգացման միտումներն ու հեռանկարները:

Ուսումնասիրության նպատակը և խնդիրները: Սույն հետազոտության նպատակն է Իսրայելի պետության և իրավական համակարգի կազմավորման և կայացման գործընթացում հուդայականության ունեցած ազդեցության և դրանով պայմանավորված՝ պետության և իրավական համակարգի բնույթի պարզաբանումը, Իսրայելում սահմանադրական զարգացումների և մարդու իրավունքների իրավական կարգավորման պատմական ընթացքի, առանձնահատկությունների և դրանք պայմանավորող գործոնների վերհանումն ու գնահատումը, պետության և կրոնի փոխհարաբերության բնույթի պարզաբանումը, կրոնական ազատության ապահովման նպատակով կրոնական ինստիտուտների գործունեությանը պետական ներգրավվածության իսրայելական փորձի բացահայտումը, ինչպես նաև կրոնականության հարցերում հաստատված ստատուս-քվոյի փոփոխման ու զարգացման միտումների ու հեռանկարների կանխորոշումն ու գնահատումը: Այդ նպատակին համապատասխան՝ առաջ են քաշվել հետազոտության հետևյալ խնդիրները՝

- վերլուծել Իսրայելի պետության կազմավորմանը նախորդած ժամանակահատվածում տարբեր կրոնական և սոցիալ-քաղաքական ուղղությունների (ուժերի) գաղափարախոսությունը և դրանց միջև կրոնականության հարցերում հաստատված ստատուս-քվոյի բովանդակությունը,
- իրականացնել Իսրայելի պետության հիմնադիր փաստաթղթերի վերլուծություն՝ դրանցում ստեղծվելիք հրեական պետությանը ներկայացվող պահանջների բացահայտման և պետության բնույթի պարզաբանման նպատակով,
- վերլուծել Իսրայելի պետության աշխարհիկ օրենսդրությունը՝ պետության հրեականության օրենսդրական ամրագրման բացահայտման նպատակով,
- իրականացնել Իսրայելի պետության հրեական և ժողովրդավարական բնութագրերի հարաբերակցության վերլուծություն,
- վերլուծել «Վերադարձի մասին» և «Ազգության մասին» օրենքները՝ հրեական պետության կայացման և հրեական ինքնության սահմանման տեսանկյունից,
- վերլուծել Իսրայելի սահմանադրական զարգացումների պատմական ընթացքը,

- պարզել հիմնական օրենքների կարգավիճակի և մարդու իրավունքների իրավական կարգավորման փոփոխման ու զարգացման ընթացքն ու արդյունքները,
- իրականացնել որպես սահմանադրական հեղափոխություն բնորոշվող գործընթացների և դրանց հիմքում ընկած դոկտրինաների (ուսմունքների) վերլուծություն,
- պարզել Իսրայելում պետության և կրոնի միջև առկա փոխհարաբերության բնույթը՝ կրոնական ազատության ապահովման տեսանկյունից,
- իրականացնել կրոնական ինստիտուտների գործունեությանը պետական ներգրավվածության վերլուծություն,
- վերլուծել կրոնականության հարցերում հաստատված ստատուս-քվոյի փոփոխման ու զարգացման միտումներն ու հեռանկարները:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Ատենախոսության մեթոդաբանական հիմքն են կազմել պատմահիրավական, ձևական-տրամաբանական, համեմատական-իրավական, համակարգակառուցվածքային մեթոդները:

Հետազոտության տեսական հիմքը: Հետազոտության տեսական հիմք են հանդիսացել Ա. Բարաքի, Ս. Նավոտի, Բ. Մեդանի, Ռ. Գավիսոնի, ռաբբի Յ. Մեդանի, Ռ. Լապիդոֆի, Դ. Կրեթզմերի, Լ. Լիպսկիի, Ա. Բայնի, Դ. Ջ. Էլազարի, Ս. Ն. Լեբման-Ուիլցիգի, Ի. Փելեդի, Պ. Ստրումի, Վ. Պ. Վորոբյովի, Բ. Նոյբերգերի, Ա. Ռուբինշտայնի, Մ. Ն. Մարչենկոյի, Գ. Հարությունյանի, Հ. Է. Բեյքերի, Հ. Ջ. Բերմանի, Ի. Էնգլարդի, Մ. Էլոնի, Զ. Ու. Ֆոլկի, Ա. Շապիրայի, Դ. Շարֆմանի, Մ. Էդելմանի, Ջ. Ջակոբսոնի, Ս. Ա. Ալեքսանդրովայի, Ի. Զոնտիկովի, Ի. Ա. Չայկոյի, Ա. Էպշտեյնի, Ի. Մ. Էդրիի, Ռ. Հերշլի, Ս. Սմուհայի, Ի. Շաչարի և այլոց աշխատությունները: Հետազոտության մեջ օգտագործվել են նաև քաղաքագիտության, բարոյագիտության (էթիկայի), կրոնի, սոցիոլոգիայի ոլորտների արտասահմանյան գիտնականների աշխատությունները:

Հետազոտության նորմատիվ հիմքը: Հետազոտության նորմատիվ հիմքն Իսրայելի պետության իրավական ակտերն են, ինչպես նաև միջազգային պատմական և իրավական փաստաթղթերը: Մասնավորապես՝ Իսրայելի Անկախության հռչակագիրը, Իսրայելի ժամանակավոր իշխանությունների կողմից ընդունված նորմատիվ-իրավական ակտերը, «Վերադարձի մասին» և «Ազգության մասին» օրենքները, Իսրայելի պետության հիմնական օրենքները, մասնավորապես՝ «Քնեսեթի մասին» հիմնական օրենքը, «Կառավարության մասին» հիմնական օրենքները, «Մարդու արժանապատվության և ազատության մասին» հիմնական օրենքը, «Աշխատանքի ազատության մասին» հիմնական օրենքները, «Երուսաղեմի՝ Իսրայելի մայրաքաղաքի մասին» հիմնական օրենքը, «Օրենսդրության հիմունքների մասին» օրենքը, Իսրայելի պետության քրեական օրենսգիրքը, ինչպես նաև Իսրայելի գերագույն դատարանի կողմից՝ որպես արդարադատության գերագույն դատարան, կայացված դատական որոշումները: Բացի այդ՝ այդպիսի հիմք են հանդիսացել միջազգային պատմական և իրավական այնպիսի փաստաթղթեր, ինչպիսիք են Բալֆուրի հռչակագիրը, Ազգերի լիգայի խորհրդի կողմից հաստատված Պաղեստինի մանդատը, մանդատային իշխանության կողմից ընդունված Պաղեստինի հրահանգը, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի բանաձևերը և այլն:

Հետազոտության փորձառնական (էմպիրիկ) հիմքը: Հետազոտության փորձառնական հիմք են հանդիսանում այն տվյալները, որոնք ստացվել են հրեական ինքնության սահմանման, սահմանադրական վերահսկողության ամրագրման, մարդու իրավունքների իրավական կարգավորման, կրոնական ինստիտուտների գործունեությանը պետական ներգրավվածության, ինչպես նաև կրոնականության հարցերում հաստատված ստատուս-քվոյի հաստատման ու փոփոխման վերաբերյալ տեղեկությունների ու նյութերի վերլուծության արդյունքում:

Ատենախոսության գիտական նորույթն ու պաշտպանության ներկայացվող դրույթները:

Ատենախոսության գիտական նորույթն այն է, որ Հայաստանի Հանրապետությունում առաջին անգամ գիտական նյութերի, օրենսդրության, ինչպես նաև նախադեպային որոշումների հիման վրա իրականացվել է Իսրայելի իրավական համակարգի բազմակողմանի և խորը վերլուծություն և առաջադրվել միանգամայն նոր մոտեցումներ:

Ատենախոսության գիտական նորույթն արտահայտվում է նաև պաշտպանության ներկայացվող հետևյալ դրույթներում՝

1. Իսրայելի պետության կազմավորմանը նախորդած ժամանակահատվածում Պաղեստինի հրեական համայնքի կրոնական և քվազի-քաղաքական գաղափարախոսությունների վերլուծության միջոցով հիմնավորվել է, որ դրանց (դրանք ներկայացնող ուժերի) միջև կրոնականության հարցերում համաձայնության ձեռք բերումը, այսպես կոչված՝ կրոնական ստատուս-քվոյի հաստատումը, Իսրայելի պետության հիմնադրման գործում հանդի-

սացել է անհրաժեշտ և կարևոր նախադրյալ՝ մեծապես պայմանավորելով նաև պետության հետագա զարգացման ուղին, իրավական համակարգի բնույթը, կառուցվածքն ու բովանդակությունը:

Միաժամանակ, հաշվի առնելով Իսրայելի քաղաքական կյանքում, մասնավորապես՝ Իսրայելի բոլոր կոալիցիոն կառավարությունների կողմից կոալիցիոն հուշագրերում ստատուս-քվոն պահպանելու՝ քաղաքական ուժերի պատրաստակամությունը՝ հետևություն է արվել այն մասին, որ Իսրայելում աշխարհիկի և կրոնականի միջև առկա իրական հաշվեկշիռը՝ կրոնական ստատուս-քվոն, պետության կազմավորման օրվանից մինչ օրս պահպանվել է գրեթե անշեղորեն, ինչն, ի թիվս այլնի, անհրաժեշտ է Իսրայելը՝ որպես հրեական պետություն պահպանելու հրամայականով:

2. Իսրայելի պետության հիմնադիր փաստաթղթերի, մասնավորապես՝ Իսրայելի Անկախության հռչակագրի վերլուծությամբ հիմնավորվել է, որ Իսրայելի երկակի՝ հրեական-ժողովրդավարական բնութագիրը, սկիզբ առնելով Իսրայելի Անկախության հռչակագրից, իր հետագա հետևողական զարգացումն է ստացել Իսրայելի պետության աշխարհիկ օրենսդրության մեջ՝ դառնալով պետության սահմանադրական և սոցիալ-քաղաքական համակարգի մեկնակետ:

3. Իսրայելի պետության աշխարհիկ օրենսդրության մանրամասն վերլուծության միջոցով հիմնավորվել է, որ Իսրայելի պետության հրեականության օրենսդրական ամրագրումը հանգեցրել է օրենսդրության մեջ իրենց բնույթով հակաժողովրդավարական տարրերի ներմուծման: Մասնավորապես, ընտրական համակարգի, շաբաթի և հանգստի օրերի, պետության խորհրդանիշերի, հրեական սննդակարգային նորմերի (քաշրութի) վերաբերյալ համապատասխան իրավական ակտերի վերլուծությամբ հիմնավորվել է, մի դեպքում, Իսրայելի ոչ հրեա քաղաքացիների նկատմամբ անհավասար և խտրական մոտեցման կիրառման հնարավորության նախատեսումը, մեկ այլ դեպքում՝ ոչ հավատացյալ հանրության նկատմամբ կրոնական հարկադրանքի կիրառումը, ինչպես նաև պետության կողմից օրենքի ուժով հանրային տիրույթում կրոնականության որոշակի մակարդակի ընդունումն ու պահպանումը:

4. «Վերադարձի մասին» օրենքի և համապատասխան դատական որոշումների վերլուծության արդյունքում հիմնավորվել է, որ աշխարհիկ օրենսդրությամբ հրեայի էթնիկ-կրոնական բնորոշման պահպանումը մեծապես պայմանավորված է հուդայականության բնույթով, մասնավորապես՝

դրանում էթնիկի և կրոնականի միասնությամբ, ինչը բացառում է հրեայի բնորոշումը՝ միայն ազգային (էթնիկ) հատկանիշով կամ հրեայի բնորոշումը՝ առանց կրոնական բաղադրատարրի կամ անկախ դրանից:

Միաժամանակ, այս ոլորտում կայացված դատական որոշումների և համապատասխան օրենսդրական կարգավորումների վերլուծության արդյունքում հետևություն է կատարվել այն մասին, որ «Վերադարձի մասին» օրենքն, ի թիվս այլնի, անհավասար և խտրական վերաբերմունք է դրսևորում հուդայականության առանձին ուղղությունների հետևորդների և Իսրայելի հրեական համայնքի՝ պետության կողմից չճանաչված առանձին հատվածների ներկայացուցիչների համար:

5. Իսրայելի պետության սահմանադրական զարգացումների և մարդու իրավունքների իրավական կարգավորման պատմական ընթացքի վերլուծությամբ հիմնավորվել է Իսրայելի պետությունում արևմտյան ժողովրդավարություններում ընդունված ձևաչափով Սահմանադրության ընդունման, ինչպես նաև մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների լրիվ ծավալով օրենսդրական ամրագրման անհնարինությունը, ինչը, մասնավորապես, պայմանավորված է Իսրայելի պետության երկակի՝ հրեական և ժողովրդավարական բնութով, քաղաքական համակարգով և դրանում կրոնական ուժերի ունեցած զգալի դերակատարությամբ և որ ավելի կարևոր է՝ հուդայականության բնույթով:

Վերը նշված գործընթացների մանրամասն վերլուծությամբ հետևություն է կատարվել այն մասին, որ մեկ միասնական Սահմանադրության և մարդու իրավունքների հռչակագրի ընդունման անհնարինության պայմաններում առանձին հիմնական օրենքների ընդունումը և առանձին մարդու իրավունքների և իրավունքների խմբի օրենսդրական ամրագրումը շրջադարձային դեր է խաղացել Իսրայելի պետության սահմանադրական զարգացումների տեսանկյունից:

6. Համապատասխան սահմանադրական զարգացումների, օրենսդրական ակտերի և դատական որոշումների վերլուծության միջոցով հիմնավորվել է, որ այսպես կոչված, Իսրայելի սահմանադրական հեղափոխությունն Իսրայելի գերագույն դատարանի նախաձեռնության արդյունք էր. չունենալով համապատասխան նորմատիվ-իրավական հիմք, բայց ելնելով մարդու իրավունքների անկապտելիության սկզբունքից՝ Իսրայելի գերագույն դատարանը հռչակեց սովորական օրենքների նկատմամբ սահմանադրական վերահսկողություն իրականացնելու և մարդու իրավունքների ոլորտում

ընդունված հիմնական օրենքներին հակասելու դեպքում այդ օրենքները հակասահմանադրական ճանաչելու իր իրավասությունը:

7. Հիմնավորվել է, որ Իսրայելի պետությունում պետական կրոն առկա չլինելով հանդերձ՝ գոյություն ունեն առանձին ճանաչված կրոնական համայնքներ, իսկ Իսրայելի հրեական համայնքի հետ փոխհարաբերություններում հիմնավորվել է, որ պետության կողմից ճանաչված են միայն ուղղափառ հուդայականության ինստիտուտները և դոգմաները: Ըստ այդմ՝ հետևություն է կատարվել այն մասին, որ Իսրայելում՝

ա) կրոնական ազատությունը երաշխավորված է Իսրայելի ոչ հրեական կրոնական համայնքների հետ փոխհարաբերություններում,

բ) հրեական համայնքի հետ փոխհարաբերություններում կրոնական ազատությունը երաշխավորված է միայն ուղղափառ հուդայականության համար: Մասնավորապես՝ ամուսնությունների և ամուսնալուծությունների օրինակով հիմնավորվել է, որ Իսրայելի պետությունում հուդայականության առանձին ուղղությունների կրոնական ազատությունը, ինչպես նաև աշխարհիկ ազգաբնակչության կրոնից ազատությունն Իսրայելում երաշխավորված չէ:

8. Կրոնական ինստիտուտների գործունեությանը պետական ներգրավվածության իսրայելական փորձի ուսումնասիրությամբ հիմնավորվել է, որ մի դեպքում՝ կրոնից ազատության, իսկ մյուս դեպքում՝ կրոնից ազատության ապահովման նպատակով կրոնական ինստիտուտների (ծառայությունների) գործունեությանը պետության ներգրավվածությունը, այդ թվում՝ օժանդակության տրամադրումն անհրաժեշտ է ու համաչափ:

9. Կրոնականության հարցերում հաստատված ստատուս-քվոն փոփոխելու՝ բոլոր ժամանակներում ամենամեծ օժանդակություն վայելող փաստաթղթի վերլուծությամբ հիմնավորվել է, որ կրոնականության հարցերում հաստատված ստատուս-քվոն էական առումով փոփոխելը, գոնե ներկայումս, անհնար է՝ պայմանավորված Իսրայելը՝ որպես հրեական պետություն պահելու հրամայականով. հրեական պետություն ասելով՝ նկատի ունենք պետություն՝ հրեական մշակույթով, հրեական արժեհամակարգով և որ ամենակարևորն է՝ ազգաբնակչության հրեական մեծամասնությամբ:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքները կարող են տեսական հիմք հանդիսանալ համեմատական իրավագիտության, խառն իրավական համակարգերի,

պետության և կրոնի փոխազդեցության և փոխհարաբերության բնույթի ու մոդելների, պետության մեջ կրոնականության ազդեցության ու դերի, սահմանադրական վերահսկողության, մարդու իրավունքների իրավական կարգավորման վերաբերյալ հետագա գիտական հետազոտությունների համար: Ատենախոսության մեջ ներկայացված մոտեցումներն ու կատարված հետազոտության արդյունքների վրա կատարված հետևությունները կարող են օգտագործվել Մերձավոր Արևելքի և, մասնավորապես, Իսրայելի վերաբերյալ ռազմավարական և գիտահետազոտական աշխատանքների մշակման, գիտական և ուսումնական այլ գրականության նախապատրաստման նպատակներով, ինչպես նաև «Համեմատական իրավագիտություն», «Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն», «Արտասահմանյան երկրների սահմանադրական իրավունք» ուսումնական դասընթացների դասավանդման ընթացքում:

Հետազոտության արդյունքների փորձարկումն ու ներդրումը: Ատենախոսությունը քննարկվել է Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնում: Հետազոտության հիմնական դրույթները և եզրահանգումները ներկայացված են հեղինակի հրատարակած թվով 6 գիտական հոդվածներում և 1 գիտաժողովի թեզիսում:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը կառուցված է ներածությունից, երեք գլուխներից, տասներեք ենթագլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության **1-ին գլխի վերտառությունն է «Իսրայելի կազմավորումը՝ որպես հրեական և ժողովրդավարական պետություն»:** Այդ գլխի **1-ին ենթագլխում՝ «Կրոնի հետ փոխհարաբերությունների ձևավորումն ու հաստատումը պետության կազմավորման նախօրեին»**, ներկայացվում է 1947 թ. Պաղեստինի հրեական համայնքի (Յիշուվի) քվազի-քաղաքական և կրոնական ուժերի միջև երկխոսության արդյունքում կրոնական ստատուս-քվոյի հաստատման գործընթացը: Ինչպես ցույց է տալիս հեղինակը, Իսրայելի դեպքում ստատուս-քվոն նախորդել է պետության կազմավորմանը (1948 թ.)՝ կարևոր քայլ հանդիսանալով այդ գործընթացում: Նշվածի կարևորությունն ընդգծելու նպատակով ատենախոսն անդրադարձել է

Ցիշուվի առաջատար քվազի-քաղաքական և կրոնական ուժերի գաղափարախոսությանը: Մասնավորապես՝ ցույց է տրվում, թե ինչպես երկու հակամարտ ուժեր՝ աշխարհիկ քաղաքական սիոնիզմն ու ուլտրա-ուղղափառ հուդայականությունը փոխզիջումների ճանապարհով համաձայնության են գալիս ապագա հրեական պետության բնույթի վերաբերյալ:

Կրոնական ստատուս-քվոյի վերաբերյալ վերը նշված համաձայնագրով, մասնավորապես, նախատեսվում էր հուդայականության պահանջմունքների բավարարումը մի շարք հարցերում, այն է՝ շաբաթի և քաշրութի պահպանումը, մարդու անձնական կարգավիճակի հարցերում հրեական-կրոնական իրավունքի բացառիկ իրավասության երաշխավորումն, ինչպես նաև կրոնական դպրոցների առանձնացված համակարգի գործունեությունը: Համաձայնագիրը, կարևոր նշանակություն ունենալով պետության կազմավորման ճանապարհին, մեծապես պայմանավորել է նաև Իսրայելի պետության զարգացման ուղին, ինչպես նաև իրավական համակարգի բնույթն ու բովանդակությունը:

1-ին գլխի 2-րդ ենթագլխում՝ «Իսրայելի հիմնադրումը՝ որպես հրեական և ժողովրդավարական պետություն», հեղինակը Իսրայելի պետության բնույթի պարզաբանման նպատակով վերլուծության է ենթարկել Իսրայելի պետության հիմնադիր փաստաթղթերը: Այսպես՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի թիվ 181/11 բանաձևը (1947 թ.) նախկին Պաղեստինի տարածքում նախատեսում էր ժողովրդավարական պետությունների ստեղծում, որտեղ սահմանադրորեն պետք է երաշխավորվեր բոլոր բնակիչների իրավահավասարությունն՝ անկախ կրոնից, ազգային պատկանելությունից, ինչպես նաև կրոնի ու խղճի ազատությունը:

Անկախության հռչակագրով (ընդունված՝ 1948 թ. մայիսի 14-ին) Իսրայելն ստեղծվեց՝ որպես հրեական և ժողովրդավարական պետություն: Իսրայելի պետության այս երկակի բնութագիրը, լուրջ հակասությունների ու տարակարծությունների տեղիք տալով հանդերձ, դարձավ Իսրայելի պետության, ներառյալ՝ իրավական համակարգի մեկնակետ: Թեպետ Անկախության հռչակագիրը ևս նախատեսում էր ժողովրդավարական Սահմանադրության ընդունման վերաբերյալ պահանջ, ինչպես նաև բոլոր բնակիչների իրավահավասարությունն ու կրոնի և խղճի ազատությունը երաշխավորող դրույթներ էր պարունակում, դրանք այդպես էլ անկատար մնացին:

1-ին գլխի 3-րդ ենթագլխում՝ «Իսրայելի հրեականության արտացոլումը

պետության օրենսդրության մեջ» վերտառությամբ, ատենախոսն առկա իրավակարգավորումները քննարկել է պետության ժողովրդավարական բնույթի հետ համատեղելիության դիրքերից: Մասնավորապես՝ հեղինակը վերլուծության է ենթարկել «Քնեսեթի մասին» հիմնական օրենքում 1985 թ. կատարված փոփոխությունները, որոնցով արգելվում էր Քնեսեթի ընտրություններում Իսրայելի՝ *որպես հրեա ժողովրդի պետություն* լինելու փաստը հերքող ընտրական ցուցակների մասնակցությունը: Դատական պրակտիկայում այս սկզբունքն ամրագրվել էր դեռևս 1965 թ.:

Մեկ այլ՝ հանգստի օրերի մասին իսրայելական օրենսդրությամբ վերլուծությամբ ցույց է տրվում, որ Իսրայելում շաբաթն ու հրեական տոները համարվում են հանգստի պետական տոներ: Իսկ, այսպես կոչված, Բար-Իլան փողոցի գործով կայացված հայտնի որոշմամբ Իսրայելի գերագույն դատարանի կողմից սահմանվեց, որ Իսրայելի հրեական և ժողովրդավարական պետությունում աշխարհիկ ազգաբնակչության տեղաշարժվելու ազատության սահմանափակումն՝ ուլտրա-ուղղափառ հատվածի կրոնական զգացմունքերն չվնասելու նպատակով, համաչափ է և անհրաժեշտ: Իսրայելական օրենսդրության հետագա վերլուծությամբ հեղինակը ցույց է տալիս, թե ինչպես հրեականությունն, սկիզբ առնելով Իսրայելի անկախության հռչակագրից, հանգեցրել է օրենսդրության մեջ իրենց բնույթով հակաժողովրդավարական տարրերի ներմուծման:

1-ին գլխի 4-րդ ենթագլխում՝ «Իսրայելի հրեական և ժողովրդավարական բնութագրերի հարաբերակցությունը», հեղինակը վերլուծության է ենթարկել Իսրայելի պետության հրեական և ժողովրդավարական բնութագրերի համատեղելիության հարցը՝ շեշտադրելով հատկապես հրեական բնութագրի բովանդակության բացահայտումը: Այս նպատակով հեղինակի կողմից վերլուծության են ենթարկվել մասնագիտական գրականության մեջ առաջ քաշված երեք տեսությունները՝ ազատական-աշխարհիկ, ազգային-կրոնական և հրեական արժեքների աշխարհիկ մեկնաբանությունն՝ այսպիսով ցույց տալով Իսրայելի երկակի բնութագրի հետ կապված խնդիրների ու մոտեցումների ողջ բազմազանությունը:

1-ին գլխի 5-րդ ենթագլխում՝ «Վերադարձի մասին» օրենքը պետության հրեականության իրացման և հրեական ինքնության սահմանման համատեքստում», հեղինակը վերլուծել է «Վերադարձի մասին» օրենքը (1950 թ.) և, մասնավորապես, «Ո՞վ է հրեա» հարցը դրա համատեքստում: Օրենքը, ի կատարումն Անկախության հռչակագրի, յուրաքանչյուր հրեայի Իսրայել

վերադառնալու իրավունք էր վերապահում՝ առանց նախատեսելու, թե ով է հրեան։ Նշվածը, ինչպես ցույց է տալիս հեղինակն առանձին դատական գործերի վերլուծությամբ, պայմանավորված էր հրեայի ինքնության սահմանման հետ կապված կրոնական, զաղափարական և քաղաքական բնույթի մի շարք խնդիրներով։

Հրեայի սահմանումն օրենքում տրվեց միայն երկու տասնամյակ անց՝ 1970 թ. օրենքում կատարված փոփոխություններով։ Իսրայելի *աշխարհիկ* պետությունն, ի սկզբանե չցանկանալով կրկնել հրեայի՝ կրոնական իրավունքում առկա էթնիկ-կրոնական բնորոշումն, ի զորու չեղավ խուսափել դրանից։ Իսրայելի գերագույն դատարանն, իր հերթին, վերահաստատեց այս մոտեցումն՝ սահմանելով, որ անկախ կրոնի նկատմամբ ունեցած սուբյեկտիվ-անհատական վերաբերմունքից, անձը կարող է հրեա համարվել միայն էթնիկի և կրոնականի միաժամանակյա առկայության պարագայում։

Հեղինակը ենթագլխի վերջում քննարկել է նաև կրոնափոխությունների հետ կապված խնդիրը՝ ցույց տալով, որ Իսրայելի տարածքում պետության կողմից միայն ուղղափառ կրոնափոխությունների ճանաչումը ոտնահարում է հուդայականության ոչ ուղղափառ՝ ռեֆորմիստական ու պահպանողական ուղղությունների հետևորդների իրավունքներն ու օրինական շահերը։

Ատենախոսության **2-րդ գլխի՝ «Իսրայելի պետության սահմանադրական զարգացումները. մարդու իրավունքներն սահմանադրական զարգացումների համատեքստում», 1-ին ենթագլխում՝ «Իսրայելի սահմանադրական զարգացումները. համառոտ պատմական ակնարկ»** վերտառությամբ, ցույց է տրվում իսրայելական սահմանադրահիրավական զարգացումների յուրահատուկ պատմական ընթացքը։ Ըստ պետության հիմնադիր փաստաթղթերի՝ Սահմանադրության ընդունումը նախատեսված էր մինչև 1948 թ. հոկտեմբերի 1-ը՝ հատուկ այդ նպատակով ստեղծվելիք Սահմանադիր ժողովի կողմից։ 1949 թ. հունվարի 25-ին տեղի ունեցած համապետական ընտրությունների արդյունքում թեպետ Սահմանադիր ժողովը ձևավորվեց, սակայն վերջինս ձախողեց իր այս առաքելությունը։ Սահմանադրության չընդունման պատճառների մեջ ատենախոսը, մասնավորապես, առանձնացնում է պետության և կրոնի միջև չլուծված հակամարտությունը, ինչպես նաև հուդայականության բնույթը։

Փոխարենը՝ 1949 թ. Սահմանադիր ժողովն ընդունեց «Անցումային» կոչվող օրենքը, որով նույն Սահմանադիր ժողովը հռչակվեց՝ որպես Առաջին Քնեսեթ։ Ստեղծված իրադրությունում ընդունելի լուծում համարվեց

Հարարիի բանաձևը (1950 թ.)։ Բանաձևով, մասնավորապես, նախատեսվում էր Սահմանադրության ընդունումը գլուխ առ գլուխ՝ առանձին հիմնական օրենքներ ընդունելու ճանապարհով։ Հարարիի բանաձևը լի էր անորոշություններով՝ հատկապես հիմնական օրենքների սահմանադրական կարգավիճակի հետ կապված։ Այն վերջնական լուծում ստացավ միայն 1995 թ.՝ Իսրայելի, այսպես կոչված, սահմանադրական հեղափոխության շրջանակներում։

2-րդ գլխի 2-րդ ենթագլխում՝ «Հիմնական օրենքների կարգավիճակն Իսրայելի սահմանադրական զարգացումների համատեքստում», ատենախոսի կողմից հիմնական օրենքների կարգավիճակի ուսումնասիրությունն իրականացվել է երկու հիմնական փուլով՝ բաժանման հիմքում դնելով 1992 թ. մարդու իրավունքների ոլորտում երկու հիմնական օրենքների ընդունումը։

Առաջին փուլում, ինչպես ցույց է տալիս հեղինակն առանձին դատական գործերի վերլուծությամբ, Իսրայելի գերագույն դատարանի կողմից ճանաչվում էր հիմնական օրենքների՝ միայն հատուկ մեծամասնությամբ ընդունված նորմերի գերակայությունը։ Դրանք, այսպես կոչված, կայունացված նորմեր էին, որոնք, սակայն, հարաբերականորեն հեշտությամբ կարող էին փոփոխվել Քնեսեթի կողմից՝ ձայների համապատասխան մեծամասնությամբ։ Գերագույն դատարանն, իր հերթին, իրավասու չէր քննարկել հիմնական օրենքների կարգավիճակի կամ Քնեսեթի սահմանադիր լիազորությունների հետ կապված հարցերը։

Հիմնական օրենքների կարգավիճակում փոփոխություններն արձանագրվեցին 1992 թ.՝ մարդու իրավունքների ոլորտում երկու հիմնական օրենքների ընդունմամբ։ Իսրայելական օրենսդրության մեջ ներմուծվեց «սահմանափակող դրույթ» հասկացությունը, համաձայն որի՝ հիմնական օրենքներով ամրագրված մարդու իրավունքներն սահմանափակող սովորական օրենքը կարող էր վավեր համարվել սահամանափակող դրույթով սահմանված պայմանների ամբողջությանը համապատասխանելու դեպքում միայն։

2-րդ գլխի 3-րդ ենթագլխում՝ «Մարդու իրավունքների իրավական կարգավորման հիմնախնդիրն Իսրայելի սահմանադրական զարգացումների համատեքստում», մարդու իրավունքների իրավական կարգավորման հիմնախնդիրը կրկին ներկայացվում է վերը նշված երկու հիմնական փուլերով։ Չնայած բազմաթիվ փորձերին՝ Իսրայելում հնարավոր չեղավ նաև

մարդու իրավունքների հռչակագրի ընդունումը: Ավելին՝ հենց մարդու իրավունքների սահմանադրական ամրագրման հարցն էր, որ ի սկզբանե անհնարին դարձրեց Սահմանադրության ընդունումը:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների օրենսդրական ճանաչման ու ամրագրման անհնարինության պայմաններում, նշված առաջին փուլում մարդու իրավունքների պաշտպանությունն Իսրայելում իրականացվում էր Իսրայելի գերագույն դատարանի կողմից մարդու իրավունքների դատական ճանաչման ու ամրագրման միջոցով: Այսպես կոչված, Քոլ հա-ամ դատական գործից (1953 թ.) սկսած գրեթե բոլոր հանրաճանաչ մարդու իրավունքներն ու հիմնարար ազատություններն աստիճանաբար ճանաչվեցին Իսրայելի գերագույն դատարանի կողմից՝ կազմելով, այսպես կոչված, Իրավունքների դատական հռչակագիրը: Սրանք, սակայն, *թույլ* իրավունքներ են, քանի որ կարող են հեշտությամբ սահմանափակվել Քնեսեթի կողմից ընդունված օրենքներով:

Իսրայելում մարդու իրավունքների ոլորտում կարևորագույն փոփոխություններն արձանգրվեցին 1992 թ.՝ մարդու իրավունքների ոլորտում երկու հիմնական օրենքների ընդունմամբ: 1995 թ. Միզրախի բանկի գործով կայացված որոշմամբ Իսրայելի գերագույն դատարանն սահմանեց, որ «Աշխատանքի ազատության» և «Մարդու արժանապատվության և ազատության մասին» հիմնական օրենքներով նախատեսված իրավունքները ոտնահարող և սահմանափակող դրույթի պայմանների ամբողջությանը չբավարարող սովորական ստատուտները հակասահմանադրական են: Նույն որոշմամբ Իսրայելի գերագույն դատարանն իրեն վերապահեց հիմնական օրենքների սահմանադրականությունը լուծելու իրավասությունը: 1992 թ. ի վեր Իսրայելում այլևս որևէ նոր հիմնական օրենք չի ընդունվել, իսկ մարդու իրավունքների մեծ մասը դեռևս օրենսդրական ամրագրում չունեն:

Հենց այս գործընթացներն են, որ իսրայելական մասնագիտական գրականության մեջ որակվեցին՝ որպես սահմանադրական հեղափոխություն, ինչին էլ ատենախոսի կողմից անդրադարձ է կատարվել **2-րդ գլխի 4-րդ ենթագլխում՝ «Իսրայելական սահմանադրական հեղափոխությունը»** վերտառությամբ:

Ատենախոսության **3-րդ գլխի՝ «Պետությունն ու կրոնն Իսրայելում. պետության բնույթի փոփոխման և զարգացման միտումներն ու հեռանկարները», 1-ին ենթագլխում՝ «Իսրայելի իրավական համակարգի երկակի՝ աշխարհիկ-կրոնական բնութագիրը. համառոտ ակնարկ»**, ընդհանուր գծերով ներկայացվում են Իսրայելի իրավական համակարգում հրեական կրոնական իրավունքի գործողության սահմանների, կրոնական ազատության ապահովման, կրոնական ինստիտուտների գործունեությանը պետական ներգրավվածության, ինչպես նաև պետության բնույթի, դրա զարգացման ու փոփոխման հետ կապված հարցեր, որոնց մանրամասն վերլուծությունը տրված է 3-րդ գլխի հաջորդող երեք ենթագլուխներում:

3-րդ գլխի 2-րդ ենթագլխում՝ «Պետության և կրոնի փոխհարաբերության բնույթը կրոնական ազատության ապահովման համատեքստում» վերտառությամբ, Իսրայելում պետություն-կրոն փոխհարաբերության բնույթի վերաբերյալ հարցերը քննարկվել են կրոնական ազատության ապահովման համատեքստում:

Ինչպես ցույց է տալիս հեղինակն, Իսրայելի պետությունում երաշխավորված է առանձին կրոնական համայնքների կրոնական ազատությունը. պետությունը, մասնավորապես, ճանաչում է դրանց բացառիկ իրավասությունն անձի անձնական կարգավիճակի հետ կապված հարցերում: Մինչդեռ Իսրայելի հրեական համայնքի դեպքում պետության կողմից ճանաչված են միայն ուղղափառ հուդայականության դոգմաներն ու ինստիտուտները: Մասնավորապես՝ ամուսնությունների և ամուսնալուծությունների օրինակով հեղինակը ցույց է տալիս, որ Իսրայելի պետությունում բոլոր հրեաների ամուսնությունը կատարվում է ուղղափառ ռաբբիների կողմից, ինչը խախտում է հուդայականության մյուս ուղղությունների՝ ռեֆորմիստական և պահպանողական, հետևորդների կրոնական ազատությունը: Մյուս կողմից՝ Իսրայելի աշխարհիկ ազգաբնակչության դեպքում ուղղափառ ծիսակատարությունների միջոցով ամուսնությունների կատարումը ոտնահարում է նրանց կրոնից ազատությունը, Իսրայելի պետությունում քաղաքացիական ամուսնության ինստիտուտ չկա:

3-րդ գլխի 3-րդ ենթագլխում՝ «Կրոնական ինստիտուտների գործունեությանը պետական ներգրավվածության իսրայելական փորձը», ներկայացվում է կրոնական ինստիտուտների գործունեությանը պետական ներգրավվածության հիմնախնդիրը՝ մի կողմից կրոնական ազատության ապահովման, մյուս կողմից՝ կրոնական հարկադրանքի բացառման նպատակով:

Մասնավորապես՝ սրբավայրերի օրինակով հեղինակը ցույց է տալիս, որ պետության կողմից կրոնական վարքագծի կարգավորումը նպատակ ունի

երաշխավորել բոլոր հավատացյալների համար սրբավայրերի մատչելիությունն ու պաշտամունքի ազատությունը՝ միաժամանակ բացառելով «սրբապղծություն» համարվող գործողությունները: Իսրայելում նման իրավիճակ առաջացավ, մասնավորապես, երբ հավատացյալ կանանց մի խումբ՝ հայտնի «Պատի կանայք» անվանմամբ, փորձ արեց Լացի պատի մոտ աղոթել ուղղափառ հրեաների պատկերացմամբ՝ միայն տղամարդկանց համար ընդունելի եղանակով: Ի տարբերություն քրիստոնեական սրբավայրերի՝ Իսրայելի գերագույն դատարանն այս դեպքում որոշեց միջամտել՝ սահմանելով, որ սրբավայրում վարքագծի կանոններն սահմանելիս շահագրգիռ բոլոր կողմերի շահերի հաշվառման վրա հիմնված անկողմնակալ մոտեցում պետք է ցուցաբերվի:

Մյուս կողմից՝ քաշրութի (սննդակարգային նորմեր) ոլորտում Իսրայելի գլխավոր ռաբբիության գործունեությանը՝ գերագույն դատարանի միջամտությունը, ինչպես ցույց է տալիս ատենախոսը, նպատակ ուներ կանխելու քոշեր սննդի առուծախով զբաղվող տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ ռաբբիության կողմից կրոնական հարկադրանքի կիրառման հնարավորությունը: Նման իրավիճակ, մասնավորապես, առաջանում էր այն դեպքերում, երբ գլխավոր ռաբբիությունը քոշեր սննդի վկայականներ տրամադրելիս, բուն քոշեր սննդին առնչվող կանոններից բացի, տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ սահմանում էր պետության կողմից նախատեսվածից ավելի՝ իրենց բնույթով զուտ կրոնական պահանջներ: Նմանապես, կրոնական հարկադրանքից զերծ պահելուն էր ուղղված նաև Իսրայելի գերագույն դատարանի կողմից հրեական հուղարկավորական գործակալությունների գործունեության կարգավորումը՝ ի թիվս այլնի վերացնելով հանգուցյալների ծննդյան և մահվան տարեթվերը գրիգորյան տոմարով նշելու վերջիններիս կողմից կիրառվող արգելքը:

Վերջում՝ կրոնական ազատության և իրավահավասարության ապահովման դիրքերից հեղինակը վերլուծում է անձի անձնական կարգավիճակի, ինչպես նաև կրոնական դպրոցների վերաբերյալ օրենսդրությունը:

3-րդ գլխի 4-րդ ենթագլխում՝ «Կրոնականության հարցերում հաստատված ստատուս-քվոյի փոփոխման ու զարգացման հիմնական միտումներն ու հեռանկարները» վերտառությամբ, ներկայացվում է պետության և կրոնի միջև հաստատված հաշվեկշիռը փոխելու ուղղությամբ ձեռնարկված քայլերից թերևս կարևորագույնը՝ 2004 թ. Իսրայելի ժողովրդավարական ինստիտուտի կողմից մշակված փաստաթուղթը՝

«Իսրայելում պետության և կրոնի հարցերում նոր պայմանագրի հիմունքներ» անվանմամբ: Այն թեև չընդունվեց, սակայն շարունակում է մնալ ստատուս-քվոյի շուրջ ծավալվող քննարկումների առանցքը:

Նշված փաստաթղթով առաջարկվող լուծումները մեծամասամբ առաջադեմ էին՝ ուղղված Իսրայելի հրեա բնակչության բոլոր հատվածների իրավահավասարության ապահովմանն ու կրոնական հարկադրանքի բացառմանը: Այդուհանդերձ, ստատուս-քվոն փոխելու վերաբերյալ ամենամեծ հեղինակություն վայելող այս փաստաթուղթն անգամ ի զորու չէր վերջնական լուծում տալու հուդայականության դիրքերից ամենամեծ կարևորություն ներկայացնող հարցերին, ինչպիսին է, օրինակ՝ «Ո՞վ է հրեան»: Չկարողանալով հասնել հրեայի մեկ միասնական բնորոշմանը՝ հրեայի ավանդական սահմանմանը զուգահեռ ներմուծվեց «Իսրայելի ժողովրդին միացած անձ» հասկացությունը, որը պետք է օգտագործվեր Իսրայելի պետություն վերադարձի իրավունքի համատեքստում: Նման բնորոշման ներմուծումը լի է հրեա ժողովրդին երկու տարբեր հատվածների՝ «լրիվ» և «ոչ լրիվ» հրեաների բաժանելու վտանգով:

Վերջում, ինչպես ցույց է տալիս հեղինակը, հրեականությունը՝ դրա կրոնական բովանդակությամբ հանդերձ, ընկալվում է՝ որպես Իսրայելի պետության հիմքը, իսկ դրա պահպանումը՝ պետության առաքելությունը: Իրավական համակարգն, իր հերթին, արտացոլելով կրոնականության հարցերում տարբեր ժամանակներում գոյություն ունեցող իրական հաշվեկշիռը՝ էապես կրում է դրա ազդեցությունը:

Եզրակացության մեջ համակարգված ձևով ներկայացվել են Իսրայելի իրավական համակարգի կազմավորման ու զարգացման գործում հրեական կրոնի՝ հուդայականության ունեցած ազդեցությունը, սահմանադրաիրավական զարգացումներն, ինչպես նաև իրավական համակարգի զարգացման միտումներն ու հեռանկարները:

Թեկնածուական ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. ***Վ. Կարապետյան***, Մարդու իրավունքների իրավական կարգավորման հիմնախնդիրներն Իսրայելի սահմանադրաիրավական զարգացումների համատեքստում: Օրինականություն, թիվ 96, 2016, 12-18 էջեր:
2. ***Վ. Կարապետյան***, Կրոնի հետ փոխհարաբերությունների ձևավորումն ու հաստատումն Իսրայելի պետության կազմավորման նախօրեին: Պետություն և իրավունք, թիվ 4 (74), 2016, 11-20 էջեր:

3. ***Վ. Կարապետյան***, Իսրայելի հիմնադրումը՝ որպես հրեական և ժողովրդավարական պետություն. հրեականության արտացոլումն օրենսդրության մեջ: Արդարադատություն, մարտ 1 (36), 2017, 66-72 էջեր:
4. ***Վ. Կարապետյան***, Հիմնական օրենքների կարգավիճակի փոփոխությունն Իսրայելի սահմանադրական զարգացումների համատեքստում: Հանրային կառավարում, թիվ 1/2017, 2017, 125-133 էջեր:
5. ***Վ. Կարապետյան***, Կրոնական ինստիտուտների գործունեությանը պետական ներգրավվածության հիմնախնդիրն Իսրայելում. Սուրբ վայրերում կրոնական վարքագծի կարգավորման առանձնահատկությունները: Օրինականություն, թիվ 97, 2017, 57-62 էջեր:
6. ***Վ. Կարապետյան***, Կրոնական ազատության ապահովման հիմնախնդիրն Իսրայելի պետությունում: Պետություն և իրավունք, թիվ 2-3 (76-77), 2017, 115-119 էջեր:
7. ***Վ. Կարապետյան***, Իսրայելի պետության սահմանադրահիրավական զարգացումները. համառոտ պատմական ակնարկ: ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2016 թ. նստաշրջանի նյութերի ժողովածու: ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ, խմբ.՝ Գ.Ս. Ղազինյան. ԵՊՀ հրատ., Երևան, 2017, էջ 52-65:

РЕЗЮМЕ

ВАРСЕР САМВЕЛОВНА КАРАПЕТЯН

РЕЛИГИОЗНЫЕ И КОНСТИТУЦИОННЫЕ ОСНОВЫ ПРАВОВОЙ СИСТЕМЫ ИЗРАИЛЯ

Суть правовой системы Израиля, помимо прочего, обусловлена влиянием и ролью еврейской религии - иудаизма в деле ее формирования и становления. Урегулирование взаимоотношений с религией предшествовало формированию государства (1948 г.), являясь важным шагом в этом процессе. Так, принятием летом 1947 г. соглашения между различными квази-политическими и религиозными силами еврейской общины Палестины был закреплено удовлетворение потребностей иудейства в ряде ключевых вопросов. Это соглашение, известное под названием религиозное статус-кво, в большинстве своем обусловило суть и содержание государства Израиль, в том числе и правовой системы.

Декларацией о независимости 1948 г. был основан Израиль, как еврейское и демократическое государство, в то время как 181-ая резолюция Генеральной ассамблеи ООН (1947 г.) предусматривала на территории бывшей Палестины создание демократического государства. Эта двойная характеристика Израиля, которая даст повод для серьезных противоречий и разногласий, стала исходной точкой социально-политической и правовой системы государства.

Еврейство государства Израиль, взяв начало из Декларации о независимости, нашла свое постепенное отражение в светском законодательстве государства. Оно в большей степени отражено, в частности, в законе «о Репатриации» (1950 г.), закон предоставляет право каждому еврею на возвращение. Однако, в законе было дано охарактеризование еврея, только через два десятка лет после принятия закона. Государство заново утвердило этническое-религиозное описание еврея, существующее в еврейском-религиозном праве.

Влияние духовенства, в основном, обусловило также конституционно-правовые развития государства Израиль. Сформированное в результате прошедших в первый раз 25 января 1949 г. всегосударственных выборов, Конституционное собрание провалилось в миссии принятия конституции.

Конституционное собрание трансформировалось в Кнессет - парламент. В сложившейся обстановке стало приемлимым решение принятия Кнессетом резолюции Харири (1950 г.), которая предусматривала принятие Конституции по главам - путем принятия отдельных основных законов. Первый основной закон был принят в 1958 г. (Основной закон «Кнессет»). Только в 1992 г. Кнессет был в силах принять два основных закона в сфере прав человека. После их принятия в Израиле не был принят ни один новый основной закон.

Вопрос о статусе основных законов был решен в 1995 г. решением Верховного суда Израиля по делу банка Мизрахи. В частности, было определено, что основные законы принятые в сфере прав человека, имеют конституционный статус, исходя из этого, обычные законы, противоречащие им, могут считаться антиконституционными, а Верховный суд предоставил себе правомочие проверять конституционность законов. Этот процесс квалифицировался конституционной революцией.

Израиль, сформировавшись, как еврейское государство, призвано сохранить еврейский характер государства, что и обусловливает принятие и сохранение некоторого уровня религиозности в общественной сфере. Государство Израиль, хотя и признает автономность некоторых религиозных общин, в часности в вопросах личного статуса лица, в случаях с еврейским населением признаны только иституты и догмы ортодоксального еврейства. К примеру в Израиле браки всех евреев, вне зависимости от их принадлежности к тому или иному религиозному течению, заключаются только ортодоксальными раввинами, что нарушает право религиозной свободы неортодоксальныхевреев, а вслучае с неверующими гражданами - право свободы от религии. В условиях отсутствия гражданского брака, все браки заключаются посредством ортодоксальных религиозных обрядов.

Завершая: Еврейство, со своим религиозным содержанием, воспринимается, как основа государства Израиль, а его сохранение - миссия государства. Правовая система, в свою очередь, отображает существующий в разные времена истинный баланс в вопросах духовенства, всецело неся его влияние.

SUMMARY

VARSER S. KARAPETYAN

RELIGIOUS AND CONSTITUTIONAL BASIS OF THE LEGAL SYSTEM OF ISRAEL

The Jewish religion, namely Judaism, impacted the process of forming the Israeli legal system, thus determining its nature. State-religion relations were regulated before the establishment of the Israeli state itself (1948), playing a significant role in this process. The demands of Judaism were met regarding certain key issues, based on the agreement reached between quasi-political and religious establishments of the Jewish community of Palestine. This agreement, also known as “Religious Status-Quo Agreement”, determined the nature and content of the Israeli state, the legal system included.

According to the Declaration of Independence (1948) Israel was established as a Jewish and Democratic state. Whereas, the UN General Assembly Resolution 181 (1947) was envisaging the creation of democratic countries in the territory of the former Palestine, the dual characteristics of the Israeli state became the point of departure for the entire social-political and legal system, at the same time giving rise to serious contradictions and disagreements.

The Jewishness of the State of Israel, stemming from the Israeli Declaration of Independence, further was gradually reflected in the legal system of the state, and most importantly in the Return Law (1950). The law provides every *Jew* with the right to return to Israel. The definition of “Jew”, however, was introduced only two decades later: The Israeli state confirmed an ethnic-religious definition of a Jew, provided by the Jewish religious law.

Religiosity also highly affected constitutional developments of the Israeli state. The Constituent Assembly, formed upon the first national elections on January 25, 1949 failed its mission to adopt the Constitution. It transformed itself to the first Knesset instead, meaning the Parliament. Under those circumstances the more acceptable solution was the adoption of the Harari resolution (1950). It was a proposal to adopt the Constitution chapter by chapter, by passing separate Basic Laws. The first Basic Law was passed in 1958 (Basic Law: “The Knesset”). And only in 1992 the Knesset was able to pass two Basic Laws in the field of human rights. No other Basic Law has been passed since.

The issue regarding the status of the Basic Laws was resolved only in 1995,

based upon the Israeli Supreme Court decision on the so-called, “Mizrachi bank” case. More specifically, it declared that Basic Laws enacted in the field of human rights have constitutional status. Therefore, legislation contradicting those Basic Laws can be declared as unconstitutional and the Supreme Court has reserved to itself the right to check the constitutionality of the legislation. This process was titled as the “Israeli constitutional revolution”.

Israel, being established as a Jewish state, is bound to preserve the Jewishness of the state. This may explain the fact that the state allows and upholds a certain level of religiosity in the public sphere. In Israel various religious communities enjoy some degree of autonomy, especially when it comes to the issue of personal status; whereas, in the case of the Jewish population, the state recognizes institutions and dogmas of Orthodox Judaism only. As a matter of fact, in Israel all marriages between Jewish people, irrespective of their religious affiliation, are orchestrated by the Orthodox rabbis, which infringes upon the freedom of religion of non-Orthodox Jews. In the case of the secular Jewish population, freedom from religion is being violated: in the absence of civil institutions, all marriages between Jewish people in Israel are conducted through Orthodox religious ceremonies.

Concluding, while Jewishness, in its religious dimension, is perceived as the basis of the Israeli state, its preservation deems to be the state’s mission. As for the legal system, it reflects the existing balance between the state and religion, being shaped by this balance at the same time.